Վեցերորդ տարի № 12 5 Ապրիլը 1887

ԱՐՋԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԿԻՒՐԱԿԷ ՀՐԵՐԸ

Տարեկան բաժանորդագինն է հինգ րուբլի։ Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՋԱԳԱՆՔ»-ի խմբագրատանը և կենտրոնական Գրավաճառանոցում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, Редакція „Арцаганкъ“.

Առանձին համարները 10 կ. Յայտարարութիւնների բաւին 2 կ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Բժ. Արամեանի «Գիւղական հոգևորականութեան հիմնական պահանջը» անունով յօդուածի առթիւ։ Թիֆլիզի Հայոց Հեաց Բարեգ. Ընկ. ընդհանուր ժողովը։—ՖԷԼԻԷՏՕՆ։ Մի քանի տեղեկութիւններ։ Սամուէլ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԺ. ԱՐԱՄԵԱՆԻ «ԳԻՒՂԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԸ» ԱՆՈՒՆՈՎ, ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԹԻՒ։

Պ. բժ. Արամեանը նորից արծարծում է այն խընդիրը, որ վերաբերում է գիւղական հոգևորականութեան։ Պարոնը՝ ի նկատի առնելով մեր միակ ճեմարանի և թեմական դպրեվանքների տուած արդիւնքը, բոլորովին մի նոր սկզբունքով հասնում է այն եզրակացութեան, որ յիշեալ հիմնարկութիւնների սանները չեն յարմարիլ երբեք գիւղական քահանաներ լինելու, եթէ լինեն էլ, չէին կարող օգտակար հանդիսանալ իրանց ալժմու տուած մտաւոր պաշարով և ուղղութեամբ։ Նա հակառակ է այն հանրացած կարծիքին, թէ հոգևորական դրութիւնը կարելի է բարձրացնել, նորա ներկայ վիճակը չբարելոյն չափ ապահովելով։

Սակայն այս տեսակէտի պաշտպանները երբէք չեն ասել, որ «միմիայն նիւթական ապահովութիւնը կարող է տալ մեզ արժանաւոր քահանաներ». այլ, նայելով ներկայիս պահանջներին մի կողմից՝ և հոգևորականի դրութեան միւս կողմից՝ ասած են. եթէ բարոյական և մտաւոր բարձրութիւնը հոգևորականի կարևորագոյն յատկանիշը պէտք է լինի, եթէ հոգևորականը ժողովրդի առաջնորդը և ուսուցիչը պէտք է լինի, եթէ հոգևորականը լոկ ծիսակատար չէ լինելու, այլ և ուսուցանող, դաստիարակող, լուսաւորող մոլութիւնների, մոլորութիւնների և սնափառութիւնների դէմ մաքառող, ապա հարկաւոր է, որ նա զբաղուած լինի իր կոչման վերաբերեալ գործերով. նա պէտք է շարունակ ուսանի և ուսուցանէ. պէտք է իր պաշտօնին և իր ժողովրդի բարօրութեան վերաբերեալ գիտութիւններին անձնուէր լինի և յամառատիրող, որպէս զի իր բուն նպատակին ծառայել կարողանայ։ Պարզ է, որ այդ պահանջներին բաւարար չանքեր նուիրելու համար, քահանան չի կարող իր ընտանեկան ապրուստի և ապահովութեան կարևորագոյն նիւթական միջոցները հայթայթել որ և է ուրիշ պարապմունքներով—առևտրով, երկրագործութիւնով, արհեստներով և այլն. ուրեմն, ո՞վ պէտք է նորա ընտանիքի առօրեայ ապրուստը տայ. նորա որդոց կրթութեան և ուսման հարկաւոր ծախքերը հոգայ. հասկանալի է, որ քահանայի ժողովուրդը պէտք է իր վերայ առնի այդ ամենը։ Այս տեսակէտից է յառաջացել ֆահանայի ապահովութեան խնդիրը, որին և հետևել է Սինոդի վերջին կարգադրութիւնն անշուշտ, թէպէտ և դժուարին գործադրելի։

Պարոն Արամեանը ասում է. «Քահանայական խնդրի տեսութեան ժամանակ այս սկզբունքով (իմա նիւթական) վարուելը՝ աններելի սխալ է». մենք կ՚ուզենք. մինչև անգամ յանցանք է, եթէ այդ լինէր միշտ։ Բայց դա սկզբունք չէ, այլ միջոց է բուն սկզբունքին հասնելու։ Սկզբունքն այս է, որ քահանան լինի բարոյական և զարգացած հոգևոր ու արտաքին գիտութիւններով, որ սիրէ իր պաշտօնը և հաւատարիմ ծառայէ իր գրօշակին. բայց և ունենայ մարդավայել կենցաղավարութիւն, որ ամենևին հակառակ չէ իր սկզբունքին։

Պ. Արամեանը նկատում է, որ «սովորաբար իրանց կոչման անվայել ու գայթակղիչ վարքի, բարքի տէր են լինում այնպիսի քահանաներ, որոնք ամենևին տեղիք

չը պիտի ունենայինք իրանց նիւթական վիճակից ժժգոհ լինելու. և ընդհակառակը՝ առաւել շատ սրբութեան և մարդասիրութեան կրօնի օրինակ են հանդիսանում նրանք, որոնց վերայ անպատնէշ ծանրութիւնքը ծանրացած է չափաւորութեան փաժան լուծը»:

Ջենք հերքում, որ այդպիսի օրինակներ կարող են լինել. բայց մի՛թէ հաւատանք, որ եթէ՝ «չքաւորութեան գաժան լուծը» վերցնէինք սրբութեան և մարդասիրութեան օրինակ եղող քահանայի վերայից՝ նա գայթակղիչ վարք ու բարքի կը տիրանայ, և կամ թէ՝ վերջինիս ապահով վիճակը փոխելով չքաւորութեան՝ սրբութեան օրինակ կը հանդիսանայ: Եթէ այս անհնարին է, ուրեմն առաքինութեան և մոլութեան ծագումն չենք կարող ճոխութեան և աղքատութեան մէջ որոնել. բարեկեցութիւնը բնաւ չի կարող վարքի ու բարքի ուղերիչ ընդունուիլ, ինչպէս և անտանելի չքաւորութիւնը չի կարող սրբութեան պատճառ համարուիլ. դա վաղուց մաշուած վարդապետութիւն է, որ այլ ևս հրապարակ չը պիտի գայ: Մ՛ի կողմից՝ պ. բժ. Աբրամեանը նիւթական ապահովութեան դէմ է խօսում, միւս կողմից՝ հետևեալն է բացականչում. «Անցած են այն ժամանակները, երբ հոգևորականը առաջնորդում էր ժողովուրդը «միմիայն հոգի ապրեցնելու» քարոզներով: Ժողովուրդը արդէն լաւ ըմբռնած է, որ երկրային քաղքենիութեան չգուռզը ամենևին պրգելչ է երկնաւոր առաքինութիւնների պահանջներին, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք, որ նիւթապաշտական դարիս զգայական հրապոյրների թոյնը անօրինակ արագութեամբ վարակում է ժամանակակից հասարակութիւնը. ուրեմն եթէ հոգևորականութիւնը (լսեցէք, լսեցէք) չէ կամենում իսպառ զրկուել այն դերից, որ նրանից յափշտակել են և ճոպած անշան մանր էլ քանաքարտօֆ են, պարտաւոր է այս չարթնան գլուխն անյապել, կանոնաւորել նորա ընթացքը և պահպանել վնասակար արատաւորութիւնից»: Մի խօսքով, ըստ պ. Աբրամեանի՝ «հոգևորականութիւնը պարտաւոր է նրբ կէանդ մէջ մտաւորել, ըստ երևոյթին, երկու անմիանալի նշանաբաններ՝ «գործել զերկիր և պահել» և՝ «ոչ մտայն» հայիւ կեցցէ մարդ» (?!): Պ. Աբրամեանը պահանջում է, որ գիւղական քահանան լինի երկրագործ և գերազանց ժողովրդին նրբ «պահպանող շինարարական վարպետի մէջ», որ իւր «գործով մեզ օրինակ տայ՝ մեր պահպանող քաղքենի քաշվառնելու» (?), վերջապէս, ըստ պարոն Աբրամեանի, «գիւղական քահանայի կոչած նշանակութիւնը կը վերակենդանանայ և նորից նորա ձեռքը կանցնի ժողովրդի մտաւոր-քաղաքական գործը, եթէ նա կը սկսէ իշխել ծուխի վերայ ոչ միայն իւր բարոյականի դրական յատկութիւններով, այլ և շինարարական — աշխատունեան պրպտնդի գերազանցութեամբ»:

Ընթերցողը նկատում է, որ պ. Աբրամեանը պահանջում է գիւղական քահանայից, որ լինի նա իւր գործով օրինակ ժողովրդի պահպանող քաղքենի իւր նոյն շինարարական — պահպանող աշխատունեան պրպտնդի գերազանցութեամբ: Պ. Աբրամեանի իդեալն է երկրագործ և պահպանող քահանան, որը սակայն պէտք է «հեռու լինի աշխարհային յարաբերութիւններից»: Նա ասում է «ինչպէս զինուորի, նոյնպէս և քահանայի կրթութեան էական պայմանը — մտաւոր-բարոյական և ֆիզիկական ճշտութիւնն է, հետևաբար աշխարհային յարաբերութիւններից: Այս վերջին նպատակին հասնելու համար պահանջում է պ. բժիշկը, որ գիւղական քահանայացուների համար, քաղաքներից հեռու տեղերում, շինուին «ընճայարաններ», և հաւատացած է, որ միայն այդ «ընճայարաններից» աւարտողները կարող են գիւղական արժանաւոր քահանաներ լինել: Նորա կարծիքով, մեր միջնակարգ դպրոցները և ճեմարանը կարող են հոգևորական կոչման համար կարևոր ուսումն և գիտելիքն աւանդել, բայց չրնել և ո՛չղել գիւղական քահանաներ անկարող են. այդ նպատակին միայն «ընճայարանները» կարող են հասնել. թէ ինչպէս, այդ չէ կարողանում ասել պ. բժիշկը:

Պ. Աբրամեանի յօդուածը մեզ զարմացնում է իւր անորոշ սկզբունքներով և հակասութիւններով: Պահանջել, որ քահանան ոչ միայն քարոյական-տպաւորչ գործունեութեան, այլ և նուիրուած լինի երկրագործութեան, շինարարական պահպանութեան, օրինակ լինի իւր գործերով ժողովրդի երկրային քաղքենիութեան չգուռզներին, և միանգամայն հեռու լինի աշխարհային յարաբերութիւններից. որ կարող լինի երկու անմտաորելի սկզբունքներ իւր օրինակով և գործով միաւորել՝ այն էլ վանական կամ գիւղական ընճայարաններից դասընթացով և այլն, մի և նոյն ժամանակ պահանջել, որ ինքը, քահանան, ձգտում չունենայ երկրային քաղքենիութեան. համարել նիւթական ապահովութիւնը վնասակար՝ վարք ու բարքի համար և աղքատութիւնը սրբութեան, մարդասիրութեան ու կրօնի նպաստաւոր և այլն: Այդ անորոշութիւնները մեզ միանգամայն անհասկանալի են:

Անշուշտ պ. Աբրամեանը կ՛աշխատէ իւր հետեւեալ յօդուածներով բացատրել, թէ նախ՝ ի՞նչպիսի տեղերում պէտք է հիմնել ընճայարանները, որ հեռու լինին աշխարհային յարաբերութիւններից, երկրորդ՝ որպիսի առարկաներ, ի՞նչ քանակով և եղանակով պիտի ուսանդած, որպէս զի գիւղական քահանայացուները լինին արժանի իրանց կոչման. երրորդ ո՞վքեր պիտի լինին դաստատուները, որպէս զի նոքա տարբերուին իրանց շրջած հոգևոր ուղղութեամբ մեր այժմեան ուսուցիչներից, որոնց պատրաստած աշակերտներն անընդունակ են համարվում գիւղական քահանաներ լինելու:

Երբ պ. Աբրամեանից կ՛սպասանք լիշեալ խընդիրների լուծումն, մենք ևս միջոց կը գտնենք մեր գիտեցածն ասելու այդ ամենակարևոր հարցերի և խընդիրների վերաբերմամբ:

Ս. Բէյ-Նազարեանց:

ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ։

1887 ամի 15-ն մարտի, Ս. Նշան եկեղեցւոյ ուսումնատանը կայացաւ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը՝ նախագահութեամբ ընկերութեան պատուաւոր նախագահի Թեմական Առաջնորդի Հայոց Վրաստանի և Իմերխեթի Արհիեպիսկոպոսի, ի ներկայութիւն ընկերութեան 53 անդամի։ Սոյն ժողովը գումարուեցաւ կանոնագրութեան 29 յօդուածի զօրութեամբ՝ ընկերութեան տարեկան եւ լիամեայ հաշիւը և նախահաշիւը քննելու և հաստատելու համար։

Նախընթաց, այն է՝ 26 հոկտեմբերի 1886 ամի ընդհանուր ժողովի օրագիրը կարդալուց և հաստատելուց յետոյ վարչութեան անդամ տիկին Սոֆիա Բաբայեանը կարդաց վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը, որից երևեցաւ, որ 1886 ամի մայիսի 4 ի ընկերութեան ընդհանուր ժողովի նոր կազմակերպած վարչութիւնը ընտրել է իւր միջից առնուազն տիկին Նադեժդա Ալիխանեանին, փոխ-առնուազն տիկին Իշխանուհի Կատարինէ Բէկբուլաթեանին, և գանձապահ տիկին Վարվառէ Ռոտինեանին։ Վարչութիւնը իմանալով հայ դպրոցների բացման լուրը, շտապեց շարունակել Ս. Նշան եկեղեցւոյ գաւթի մէջ դպրոցի շինութեան գործը, որ հայ դպրոցների փակման պատճառաւ դադարած էր։ Թէպէտ այդ շինութիւնը գլուխ բերելու համար նախահաշուով որոշած էր ծախսել 4500 ռ. սակայն վարչութիւնը շինութեան վերայ ծախսել է 6503 ռ. 60 կ., որովհետև շինութիւնը կատարելու միջոցին յայտնուել են մի քանի անհրաժեշտ ծախսեր, որոնք նախատեսուած չեն եղել սկզբում կազմած նախահաշուի մէջ։ Այսպէս, դպրոցի սենեակները աւելի բարձր և աւելի լուսաւոր անելու համար, հարկաւոր է եղել գետնից հիմնապատը բարձրացնել, որի վերայ նախահաշուից դուրս ծախսուել է 200 ռ. հիմքը՝ պայմանից դուրս 10 խորանարդ սաժէն փորելու և շինելու համար—450 ռ., դպրոցի ստորին յարկը բնակութեան յարմարացնելու համար հարկաւոր է եղել պատշգամբի տակ շինել սրահ, որ նստել է 300 ռ., նախահաշուի մէջ չ'նախատեսուած մի աղիւսապատ հոր է շինուել, որ նստել է 120 ռ., գաւթի քայքայուած պատը հիմնովին շինելու, գաւիթը սալայատակելու և երկու դուռը կանգնացնելու համար ծախս է եղել 570 ռ., վերահսկող Ճարտարապետին տուել է վարձ 200 ռ. և մանր ծախքեր, այն է կապալառուի հետ պայմանագիր հաստատելու, շինութեան պլանը կազմելու և այլն 163 ռ. 60 կ.։ Այս 6503 ռ. 60 կ. գումարի մէջ ստացուել է 2250 ռ. Ս. Նշան եկեղեցուց, 197 ռ. հանգանակուած է Սբ. Աստուածածնայ հրամանաւ, 250 ռ. ընծայել է մեծ. տիկին Նատալիա Էնիկոլոպեանը, իսկ մնացեալը, այն է 3806 ռ. 60 կ. ծախսուել է ընկերութեան գումարից։—

Վարչութիւնը 27 հոկտեմբերի ընդհանուր ժողովի ներկայութիւնը ստանալով, դիմել է Թիֆլիսի արհեստաւորաց գործակերգի վարչութեան աւագին, որ սա հաղորդէ վարչութեանն այդ գործակերգի որը և չափը ընտանեաց ցուցակը և նոցա հասցէները։ Ստանալով այս տեղեկութիւնը, վարչութիւնը յանձնել է իւր անդամներին 104 ռ. գումարը, որ նոքա անձամբ դեկտեմբերի 30-ին բաժանել են ցուցակում նշանակուած անձանց և. ընտանեաց մէջ, ուր 3, ուր 5, ուր 10 ռուբլի, նայելով ընտանեաց անդամների թուին և դրութեանը։

Վարչութիւնը սոյն ամի ընդունել է Զրկենեանց եկեղեցւոյ ուսումնարանի նախկին վարչութիւնից 1987 ռ. և ստանալու է կրկին 30 ռ. նաև զանազան պիտոյքները և կարասիք, այն պայմանով, որ այդ գումարից տուրի նորան 150 ռ. պարտքը, իսկ մնացածից անձեռնմխելի դրամագլուխ կազմել և նորա տոկոսիքով ուսուցանել Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի մէջ 15 աշակերտուհի՝ գլխաւորապէս Զրկենեանց եկեղեցւոյ թաղից։ Վարչութիւնը համաձայն այս պայմանի ընկերութեան գումարից էլ մի մասը մնացնելով ստացած գումարին, գնեց 2000 ռ. արքունական արժէքուռ։

Վարչութիւնը իւր որբազան պարտքն է համարում յայտնել իւր խորին շնորհակալութիւնը հետևեալ անձանց. իշխանուհի Մարիամ Երկայնաբազուկ Աղսութեանին, որ նուիրել է 25 ռ. երեք որը և չքաւոր օրիորդաց տալու համար, բարեկրօն Հայկազնեայ կոյս Թաւլերեանցին, որ խոստացել է տալ լուրաքանչիւրը տարի 20 ռ. Ս. Նշան աշակերտուհեաց համար կարևոր դէպքերում դեղօրեայք գնելու, պ. Նազլի Փիլոյեանցին, որ իւր մատնատուր Թատրոնում տուած է յօգուտ ընկերութեան մի ներկայացում և նորա նից ստացած 225 ռ. արդիւնքը ուղարկած է վարչութեան, պ պ. Բաղդասար և Զաքարիա եղբարց Աբովեաններին, որոնք նուիրած են Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի համար թագաւոր կայսեր պատկերը փառահեղ շրջանակով, Ս. Նշան եկեղեցւոյ երեցփոխան պ. Յովհաննէս Տէր-Կարապետեանին, որ չէ խնայում իւր ձեռքից եկածը յօգուտ սոյն դպրոցին, Հայր Եզնիկ Երզնկեանին, օր. Վարվառէ Մխիթանեանին և պ. Նիկողայոս Գրիգորեանին, որոնք ձրիաբար ուսուցանում են՝ առաջինը երգեցողութիւն, երկրորդը ռուսաց լեզու և երրորդը գծագրութիւն Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի մէջ։ Տիկին Բաբայեանը՝ վարչութեան կողմից ազդարարեց ժողովականներին, որ առաջիկայ սեպտեմբեր ամսին դպրոցի մէջ կը բացուի երրորդ դասարանն մի զուգընթաց դասատուն, ուր աշակերտուհեաց հետ առանձնապէս կը պարապեն ձեռագործով։ Բայց որովհետև ներկայ շինութեան մէջ չ'կայ յարմար սենեակ, ուստի վարչութիւնը խնդրում է նախահաշուից դուրս նշանակել 500 ռ., որպէս զի եկեղեցւոյ գաւթում կանգնած մի սենեակից բացուացած բնակարանը այդ գումարով նորոգուի դասատան համար յարմարացնելու, և հարկաւոր կահ կարասիք ձեռք բերուի։ Նաև խնդրում է հաստատել նախահաշուի մէջ դպրոցի համար որոշած ծախսը ամբողջապէս, որովհետև այդ դասատունը բանալու պատճառաւ դպրոցի վերայ հարկաւոր է լինում ծախսը աւելացնել։

Այնուհետև վարչութեան տեղեկագիրը կարդալ անցեալ 1886 տարուայ ելևմտից հաշիւը, որից երևեցաւ, որ ընկերութիւնը ունեցել է մուտք նուիրաբերութիւններից 2511 ռ., 166 տարեկան և մի մշտական անդամից 1096 ռ. պարահանդէսից և նուագահանդէսից 1885 ռ. 75 կ. տոկոսիք ընկերութեան գումարից 496 ռ. 45 կ., Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի շինութիւնը կառուցանելու համար 567 ռ., ընդամէնը ստացել է սոյն տարի 6556 ռ. 20 կ. ունեցել է առաջին պրամ 6761 ռ. 18 կ. և անձեռնմխելի գումար արժէք տոմսերով 4726 ռ. 40 կ. համագումար 18043 ռ. 78 կ.։ Սոյն ժամանակամիջոցում ծախս է եղել՝ Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի պահպանութեան համար 855 ռ. 70 կ., սոյն դպրոցի շինութեան և կրակից ապահովութեան համար 6057 ռ. 10 կ. այլ և այլ ուսումնարանաց և ուսանողաց տուած է և ջրօրհնեաց տօնին բաժանուած է 469 ռ. 45 կ. և գիւանական և այլ վարչական մանր ծախսերի համար 143 ռ. 93 կ. ընդամէնը ծախս է եղած 7526 ռ. 18 կ. ունի առ 1-ն մարտի

1887 թուին առձեռն գումար 28 ռ. 31 կ. ընթացիկ հաշիւ առևտրական բանկում 3720 ռ. 45 կ. անձեռնմխելի գումար արժէքաոմսերով 6768 ռ. 84 կ. գումար դրամոց 10517 ռ. 60 կ. Համագումար ծախուց հետ 18043 ռ. 78 կ.

Նա և կարդացուեցաւ վարչութեան կազմած նախահաշիւը սկսեալ մարտի 1-ն 1887 թիւ, մինչև մարտի 1-ն 1888 թիւ, որից երևցաւ, որ մուտքը որոշած է ըստ հետեւեալին՝ 2 մշտական և 150 տարեկան անդամից 1100 ռ., պարտահանդէսից, նուագահանդէսից և այլն 1500 ռ., նուիրատուութիւններից 100 ռ., ընկերութեան գումարի տոկոսից 400 ռ., գումար 3100 ռ. Սոյն ժամանակամիջոցի համար որոշուած է ծախս՝ Ս. Նշան եկեղեցւոյ պարսպի պահպանութեան համար 2282 ռ. այլ և այլ ուսումնարանաց միանուագ օժանդակութեան և չքաւոր անձանց և ընտանեաց բաժանելու համար 500 ռ. գիւանական և այլ մանր ծախսերի համար 70 ռ., գումարն է 2852 ռ.: Ընդհանուր ժողովը քննելով թէ եղեմտից հաշիւը և թէ նախահաշիւը, երկուսն էլ միաձայն հաստատեց: Նաև որոշեց՝ նշանակել ընկերութեան գումարից 500 ռ. վարկ, որով վարչութիւնը կարողանայ Ս. Նշան եկեղեցւոյ գաւթի հին քնակարանը նորոգել երրորդ բաժանման զուգընթաց գաւառատան յարմարացնելու և այդ գաւառատան կարևոր կահ կարասիքը ձեռք բերելու համար:

Ընկերութեան պատուաւոր նախագահ Սրբազան Ա. ռաջնորդը պահպանիչով օրհնեց ժողովրդականներին և ժամը 1-ն վկնկ Ճաշոյ գոյից նիստը:

Ատենապետը վարչութեան Ն. Քիշմիշեանց:

ՖԵԼԻԵՏՕՆ

ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՏԻԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ադուանից Շաքի նահանգում, այժմեան Նուխուց գաւառում (որ կոչվում է Շաքի), Նուխի քաղաքից մօտ 70 վերստ հեռու դէպի հարաւ-արևմուտք, Կովկասեան շղթայի մի լայնանիստ հովտում, գտնվում է Ուտէացւոց Նէժ գիւղը, շրջապատած խիտ անտառներով: Գիւղի գիրքը տափարակ է, օդը ծանր, ջուրը վնասակար:

Բնակչաց թիւը մօտաւորապէս 5000 է, որից 4000 Ուտէացիները են, իսկ 1000-ը՝ խաների ժամանակ քրիստոնեութեամբ մահմեդականութիւն ընդունած նոյնպէս Ուտիք: Ուտէացիները ունեն իրանց ազգային լեզուն և սովորութիւնները, քաջ, պատերազմասէրը, արսորդ, ցամաք և նախանձոտ ժողովուրդ են: Նախանձը հասնում է ատյա մէջ ամենամեծին աստիճանին, այրում են միմեանց տները, խոտ դէզերը, գոմերը, փչացնում են միմեանց արտերը, այգիները և այլն: Որսորդութիւն են անում Կովկաս սարի լանջի վերայ և հոս գետի ափերին, ապանում են վայրենի կենդանիներ, կաքաւներ և ուրիշ թռչուններ: Չերմեռանդ են դէպի իրանց կրօնը և սովորութիւնները: Իրար հետ խօսելիս անուանում են իրանց Քշտօն, այսինքն՝ քրիստոնեայ, իսկ օտարազգիների հետ խօսելիս իրանց անուանում են Էրմանի: Հայերին տալ անուանում են նոյնպէս Քշտօն և Արմի, իսկ Հայոց աշխարհին Քշտօնից օլքեա յ: Ունին իրանց սեփական հողերը, որ առել են Թուրք բեգերից, տալ այնքան վարելահողեր չունին, որքան որ ունին իրանց հայրենի Բուժի և Մուղուզատղի Թուրք բեգերը: Մահմեդական խաների ախորտակաւթեան ժամանակ Թուրք բեգերը, իրանց ասելով, մեկնեցնելն և վաղեցնելն պաշտօն են վարել և ամեն պատերազմներին մէջ նոքա մեծամեծ ծառայութիւններ են ցոյց տուել խաներին: Խաներն էլ նորանց՝ իրանց հատատարիմ ծառայութեան համար՝ փեշքեաշ են արել (նուիրել են) մեծ տարածութեամբ հողեր, գաշտեր և վարելահողեր. բեգերն և նոցա որդիքն այդ հողերին, իբրև ժառանգական կալուածք, մինչև այժմ անրաժանելի էին: Բեգերի հողերը մեծ մասամբ ջրովի են, իսկ Նէժեցւոցը անջրդի, Թէ և կան շատ Նէժեցիք, որոնք ունեն ջրովի տափեր էլ: Նէժեցիներից շատերը իրանց հողերը առել են Բեգերից, գորա համար վճարելով մի յայտնի գումար: Բեգերն մի ժամանակ շատ մեծ դեր են խաղացել հողատիրութեան գործում և այժմ էլ պակաս դեր չեն խաղում հողի վերաբերութեամբ. նոցանից շատերը իրանց հողերը տալիս են գիւղացւոց վարելու համար, և վերջինները տանում են նոցանից ցանածի 5, 6, 7, 8, և կամ Թէ 10 բաժնից մի բաժինը՝ նայելով հանգամանքներին, իսկ երանք նոտում են իրանց անբերրի պարապ և շատ անգամ էլ կրկնում են ժողովրդական այն առածը Թէ „Հայը պատի, Թուրքը ուտի“: Նէժեցիք անջուր հողերում ցանում են ցորեն, գարի և կորեկ, իսկ ջրովի հողերում չալթուկ (լոբինձ). ջրովի հողերը աւելի Թանգ են գնահատվում, քան Թէ անջուր հողերը: Այստեղի հողերը շատ բարեբեր են, բայց առաւել բերքի են դիւղի հարաւային մասում գտնուած հողերը, ուր մէկին տասն է ստացվում, իսկ հիւսիսային մասում՝ մէկին երեք, ամենատաւատ տարին՝ մէկին չորս, որ շատ հազիւ է պատահում: Ունին պարտէզներ, քանջարանոցներ և բոստանի տեղեր, որոնց մէջ ցանում են լոբի, գետնախնձոր, գաղամբ, սոխ, սխտոր, եկիպտացորեն, վարունկ, սեխ, ձմերուկ, շամամ, դդում և գինձ: Այդ բոլորը ցանում են իրանց համար ուտելու: Իրանց հողերից ստանում են մեծ քանակութեամբ ցորեն, լոբինձ, գարի և կորեկ. պտուղներից՝ կաղին (Թխել և կամ Փընդղ), ընկոյզ և շագանակ: Բերքերը վաճառում են մեծ մասամբ Աղդաշի վաճառանոցում, իսկ բուժուքը տանում են Նուխի: Վարելահողերը, պարտէզները, Թթենու այգիները և կալերը գտնվում են դիւղի մէջ, այդ պատճառաւ էլ դիւղը շատ մեծ է երևում, նորա մի ծայրից մինչև միւս ծայրը նոյն վերստ է:

Առաջին անգամ այս դիւղը եկողը՝ կարծում է Թէ մի մեծ հնադարեան անտառի մէջ է մտնում, բայց մտնելով դիւղը նա ճանապարհին տեսնում է դիզուցիկ տներ, որոնց յարկերը ծածկուած են մեծ մասամբ եղեգով և կամ Թէ կղմինդրով: Այդ տները միմեանցից բաւականին հեռու են, նոցա շուրջը պատած է դիզուցիկ ցանկապատ, որը բաւականին փոշ է նոտում տեղացւոց: Երբ հարցնում ես դիւղացուն, Թէ ինչու համար քարից պատեր ես քաշում քո տան շուրջը, նա պատասխանում է. „Թէ դովլաթէ էլի դովլաթ“ (Հարստութիւն է էլի հարստութիւն:) Եւ, Ճշմարիտ, ում տան կառուրը ծածկուած է կղմինդրով և տան շուրջը քարեայ պատ կայ, նա հարուստ է համարվում Թէ խելքով և Թէ փողով: Եւ ամեն մի հասարակական ու ազգային գործի մէջ նորա մի չնչին խօսքը մեծ նշանակութիւն ունի դիւղացւոց համար, որովհետև նա դիւղի իշխան է, նա հանքայ մարդ է: Ամեն մի հասարակական, ազգային և եկեղեցական գործ կատարվում է այդ մարդուց կամքով, խելքով և հսկողութեամբ. այդ մարդիկ շատ ամօթի և պակասութիւն կը համարեն՝ երբ դիմեն մէկին ու նորանից խորհուրդ հարցանեն

իրանց չնմանած ու խելքը չը կտրած քանի համար: Ահա այդ տեսակ մարդկերանցով է կառավարվում 600 տուն ուզնեցող Ուտէացւոց գիւղը: Գիւղի բնակիչները պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ, դինեգործութեամբ, շերամապահութեամբ և մասամբ մեղուապահութեամբ: Կարելի է համարձակ ասել, որ տուն չկայ որ շերամապահութեամբ չը պարապի, ինչքան որ նոքա չարչարվում են շերամի վրայ, այնքան օգուտ չեն ստանում մշտապէս. գուցէ չը գիտեն պահելու ձևը, կարող է մեզ ասել չարգելի ընթերցողը, բայց ընդհակառակը՝ սրանք արդէն արհեստ են շինել իրանց համար շերամապահութիւնը և շատ լաւ գիտեն, որպէ քնելու ժամանակը, նրա կշտանալը, հիւանդանալը, մրսելը, մինչև անգամ տերև տալու ժամանակը: Եթէ տարին անձրևայլն է, գիտեն, որ որդը իւր գործը յետաձգում է և իրանք էլ բացի շատ չարչարանք կրելուց և վող ծախսելուց լաւ բոժոժ էլ չեն ստանալու, վող են ծախսում նորա համար, որ իրանց այգիների թթենիները սպառուած են լինում, պէտք է գնան իրանց հարևան Թրքաց գիւղերից տերև առնեն սայլի համար 5-ից մինչև 8-ռ. վճարելով ու բերեն: Մեծ մասամբ եթէ այս գիւղումը շերամը լաւ չէ լինում և կամ թէ սպառած օգուտը չէ տալի, դորա գլխաւոր պատճառը շերամը պահելու սենեակների անյարմարութիւնն է, օդի և լոյսի պակասութիւն է, և մի սենեակում մեծ քանակութեամբ պահելն է:

Ուտէացիների պահած շերամի ցեղը ժապօն է կոչվում, բայց տեղացիք ջապօն են կոչում. կան նոյնպէս մի քանի տներ, որոնք ունեն „ալթա-բաբա“ (պապական) աստած ցեղը, որա բոժոժը լինում է բաւականին մեծ, ամուր և թէլը լաւ: Ալթա-բաբան ծախվում է աւելի թանգ քան թէ ժապօն աստածը: Ալթա-բաբան ցեղը չէ չատանում, այլ գնալով քչանում է և բոլորովին ոչնչանում: Ասացինք, որ որքա պարապում են դինեգործութեամբ, բայց դինին պատրաստում են շատ հին—նահապետական ձևով, որպա դինիները լինում են ըստ մեծի մասին թթու և բաց կարմիր գոյնով: Այնեն տուն ինքն է պատրաստում իւր տարեկան խմելու դինին, շատ քչերը կան՝ որ չունենան մի կամ երկու կարաս խմելու գինի: Սորա խաղողի այգիները չունեն, այլ իւրաքանչիւրը 10 և կամ թէ 20 խաղողի որթ, որոնք բուսած են լինում թըթենու այգիներում: Խաղողի որթերը պատուաստելով չեն աղնուացնում և ձմեռը չեն թաղում, այլ, վայրենի խաղողի որթու պէս, թողնում են, մինչև որ ճիւղերը մեծանալով բարձրանում են և փաթաթվում բարձր և շատ բարձր ծառերի գագաթներին. խաղողը հասնելու պէս քթոցները վերցնում են և բարձրանում ծառերի գագաթները՝ և այնտեղից սկսում են քաղել խաղողը, և յետոյ նորանից պատրաստում են գինի: Այնպիսի որթեր կան այստեղ սոցա այգիներում և հանդստարաններում, որոնց արմատի հաստութիւնը հասնում է 16—20 վերշոկ, իսկ բնի հաստութիւնը 12—15 վերշոկ: Բացի խաղողի այգիները, սորա ունեն իրանց սեպհական անասունները ևս. կով, եզ, գոմէշ, ձի, մուղ, հորթ և մի քանի հատ ոչխար: Բոլոր գիւղը 250—300,000 գլուխ ապրանք կարող է ունենալ, գուցէ աւելի, քան թէ պակաս: Տարեկան ամենաքիչը 100,000 մանէթի եկամուտ ունի այս գիւղը, չը հաշուելով գիւղի մէջի վաճառականութիւնից ստացած արդիւնքները:

Այնպիսի մարդիկ և ընտանիքներ կան, որոնք 3—4 տարուայ հացը ունեն: Այդ տները բաղկացած են 20, 25, 30, 33 և մինչև անգամ 40 հոգուց: Գիւղը հարուստ է ջրով, ծառերով, ծաղիկներով, պտուղներով և բազմաթիւ ջրերով: Բնութիւնը ամեն բան առատութեամբ պարգևել է այս գիւղին, բայց իրանք իրանց ագիտութեան պատճառով չեն կարողանում բնութեան անհուն հարստութիւնից այնքան օգուտ քաղել, որքան հնարաւոր է: Գիւղացիք էլի յաց են լինում, թէ վող չունին, հող չունին, լաւ չեն ապրում, շատ են չարչարվում, մի խօսքով ընդհանուր գժգոհութիւն է տիրում սորա մէջ կեանքի վերաբերութեամբ, ի բաց առեալ մի քանիսը: Գիւղացիք խօսում են ուտիերէն և Թրքերէն, հայերէն խօսողներ էլ կան, որոնց թիւը կը հասնի մինչև 200-ի: Նիժի և Վարդաշէնի Ուտիքը դաւանակից են Հայոց և Լայ լուսաւորչական են. բայց Վարդաշէնում վրացադաւան ուտիք էլ կան, որոնք ունին իրանց առանձին եկեղեցին: Նիժեցիք ունին չորս եկեղեցի, որոնցից երկուսը քարաշէն է, իսկ երկուսը փայտաշէն: Հինգ քահանայ ունեն, որոնցից մէկը կըրթուած է համարվում: Ժողովրդին դէպի յառաջադիմութիւն մղող, նորա մէջ ազգայնութեան բուն գաղափարը վառ պահող և հայերէն խօսելուն նպաստող, համարվում է միայն տեղական Հայոց եկեղեցական դպրոցը, որը մի ահագին քարաշէն շինութիւն է, կառուցուած հին գերեզմանատան վերայ, որ բաղկացած է երեք սենեակներից, մի ահագին դահլիճից, երեք նախասենեակից և մի խոհանոցից: Այդ դպրոցը կառուցուած է Արցախու Թեմի նախկին Թեմական վերատեսուչ պարոն Յովհաննէս Տէր-Գրիգորեանցի անհուն աշխատանաց շնորհիւ, որը ամբողջ հինգ տարի այս մուրթ ու խոնաւ անկիւնում քարոզել է և հաստացրել մի քանի կուսակցութիւնների բաժանուած ռամիկ ժողովրդեան դպրոցի նշանակութիւնը և նորա անհրաժեշտ կարևորութիւնը: Պ. Տէր-Գրիգորեանցը երեք ամիսներով մնացել է այս գիւղում այն էլ ամառուայ շոգ օրերին, որպէս զի դպրոցի շինութիւնը գլուխ բերի: Անցեալ ուսումնական տարին այդ դպրոցում ուսանում էին 82 աշակերտներ, որոնցից 70 ուտէացի, իսկ 12-ը հայեր էին: Այդպիսի խաւար անկիւնում, որպիսին Նիժն է, կառուցանել այդպիսի մի հոյակապ շինուած, շատ զարմանալի է. տեսէք, ուրիմն, թէ վերոյիշեալ պարոնը որքան եռանդ և որքան աշխոյժ և համբերութիւն ունի, որկարողացել է իրագործել իւր բաղձալի մտադրութիւնը, այն էլ այդպիսի մի տգետ հասարակութեան մէջ: Նուխուց հոգևոր դպրոցից յետոյ, երկրորդ տեղը բռնում է այս գաւառում այս Գիւղի դպրոցը, որպէս կենդրոնական վարժարան: Ջուղուս, Մեըզաբէգլու, Ջանախ-պուլաղ, Խոշկաշէն, Թոսիկ և Ծերեկ գիւղերից գալիս են աշակերտներ այստեղ ուսանելու: Նիժի շրջակայքում կան Թրքաց շատ գիւղեր, որոնց բնակիչները լինչպէս ծերերը ասում են, եղել են Ուտիք, բայց ներկայումս նոքա իրանց հայերէն հաւատը ուրացած մահմետականներ են, կորցրել են մինանգամայն Ուտիական լեզուն և խօսում են Թրքերէն: Այդպիսի գիւղերից նշանաւոր են՝ Վարդանլու. Ղուրդաշէն, Բուա, Թիքանլու և Խաչմազ: Այս գիւղերի մէջ կան մինչև այժմ էլ հայի հանգստարաններ և քարուքանդ եղած եկեղեցիների հետքեր, որոնք պակաս ապացոյց չեն սոցա մի ժամանակ հայ և կամ թէ Ուտի լինելուն: Ծերերը պատմում են, թէ Պարսից տերապետութեան ժամանակ խաները սպիտել են, որ Ուտիքը իրանց կրօնը ուրանան և ընդունեն մահմետականութիւնը. մերձակայ գիւղերի հայ և Ուտի բնակիչները վախենալով հալածանքներից, ոչ թէ միայն իրանց կրօնն են փոխել, այլ և իրանց մայրենի հարազատ լեզուն ու ազգային սովորութիւնները: Բայց Նիժի բնակիչ Ուտէացիք ամուր և հաստատ են մնացել իրանց հաւատի մէջ. լաւ են համարել մեռնել իրանց պապերից

աւանդուած կենդանի ու սրբազան կրօնով, քան թէ ընդունել բռնատիրի ու խալիֆաների սպառնալիքներով տարածած մահմետականութիւնը: Այդ խաներից մէկը Հաջի-Ջալափի անունով, որը մի ժամանակ կառավարելիս է եղել Նախիջեւանի իւր շրջակայ գիւղօրայքով, իւր իշխանութեան մէջացին այս բռնատիրը հրամայում է որ բերեն իւր Դիւան-Խանան Ուտիացւոց տանուտէրը Պետրոս Իւղբաշեան: Այստեղ հրամայում է նորան իւր Ուտիացիներովը, որ ընդունի մահմետականութիւնը, բայց նա շատ քաջ և վստահ պատասխանները տալուց յետոյ, "ասում է. „լաւ կը համարեմ շուն գառնալ, քան թէ մահմետականութիւնը ընդունել": Այս խօսքերը լսելու պէս խանը շվոնթվում է, զայրանում է և հրամայում է իսկոյն և եթ սպանել նորան: Պետրոս Իւզբաշեան թաղում են Նուխում, և նորա գերեզմանը մինչև այսօր էլ կայ: Նիժեցիք տեսնելով իրանց հերոսի չարաչար մահը՝ աւելի խրախուսւում են և քաջում են համարձակ մեռնել քաջաբար, քան թէ ընդունել մահմետականութիւնը: Խանը տեսնելով, որ անհնարին է նոցա կրօնափոխ անել, շատ հալածանքներ է տալիս և վերջը հատատի համար կրկնակի հարկ է առնում „Դին-իլհակի" անունով: Նիժ գիւղի միջից անցնում է մի վտակ, որի կողքին դիւղի կենտրոնումը եղել է Վլատ նահատակի տաճքարանը: Սա նշխէ առաքեալի աշակերտներից է: Այդ տաճքարանի վերայ մի մատուռ է եղել, որ առաջ ուխտատեղի է համարուել: Բայց Աստուածատուր անունով մի քահանայ ազգով Ուտի, քանդում է այդ մատուռը մարդաչափ խորութեամբ, որտեղ գտնում է երկում պղնձեայ խաչ: Աւանդութեամբ պատմում են, թէ այդ խաչերը Ս. Մեսրովբ Թարգմանիչն է գրել, նահատակի մարմինը ամփոփելու միջոցին: Այժմ այդ տաճքարանի վերայ եկեղեցի է կառուցուած Ս. Նշխէ անունով.*) Զատկի երկրորդ շաբաթը մեծ ուխտագնացութիւն է լինում դէպի այդ եկեղեցին: Նուխուայ գաւառի բոլոր Հայ բնակիչները մեծ բազմութեամբ սայլերով, ձիերով և ոտքով դիմում են այդ եկեղեցին՝ աղօթելու Ս. Նշխէին և երկրպագելու Ս. Վլասի գերեզմանին: Դամբարանի վերայ մի փոքրիկ ծակ կայ, այդ ծակի շուրջը մոմեր են վառվում, երկրպագութիւն են անում, համբուրում են, կարմիր ձուանները դնում, ոլորած մոմեր են ընծայում, աղջիկ ու տղայ են քերում ու այնտեղ նշան դնում, մատանի են առնում և դնում աղջկայ մատին, յետոյ տղայ և աղջիկ երկրպագում են դարձեալ տաճքարանին ու աղօթում, խնդրելով Ս. Նշխէն և Ս. Վլասի բարեխոսութիւնը, որ հասնեն իրանց մասնաւորին: Այդպէս ամեն ուխտաւորը գալիս է Ս. Նշխէ և իւր ուխտը կատարում է զոհաբերութեամբ. եկեղեցւոյ բագը լիքն է լինում ուխտաւորների խառն բազմութեամբ, մատաղների ծուխը բարձրանում է մինչև երկինք, աղջիկ ու տղայ, մեծ և փոքր, երիտասարդները ու նորահարսները, և նոր նշանուած աղջիկները, բոլորն էլ մի հոգով, մի սրտով, և ուրախ ժպիտով զուգուած, զարդարուած են գոյն զգոյն շորերով, որը նոցանից գիմում է եկեղեցի աղօթելու, որը եկեղեցու դրանը իւր բարեկամի և կամ թէ ընտանու հետ է խօսում, որը իւր փոքրիկ երեխային է ծիծ տալիս, որը մատաղի միս է բաժանում, որը իւր նշանած երիտասարդին է պտրտում աչքերով, որը մի այլ երիտասարդի վերայ է ձրգտում իւր սիրալիր աչքերը: Բոլորը ուրախ են այդ օրը և ընդհանուր ուրախութիւնը տիրած է ամբողջ գիւղին: Ճաշից երեք և կամ թէ չորս ժամ անցնելուց յետ բոլորը կը ցրուին ու կերթան իրանց տները: Ուտէացի կանայք, աղջիկները և պառաւները զանազանվում են գիւղական հայ կանանցից՝ իրանց զուգուած ու կոկուած ասիական հագուստով, արծաթեայ քամարներով, գոյն զգոյն շորերով. թաւ-թաւ արխալուղով, զանազան տեսակ մանր ու մեծ ուլունքներով, հիւսուած զարդարանքներով, մետաքսեայ կարմիր շապիկով, կարմիր լայն վարտիկով, գլուխները պատած քեալագայլի թաշկինակով և արծաթեայ վզերով: Նշանուած, կամ թէ երկու կամ երեք տարուայ պսակուած հարսները մեծ ոսներին և առհասարակ չեն բացանում երեսները, իսկ իրանց տներում երեսները բացարած են շրջում: Մարդ և կին երբեք սեղան չեն նստի ի միասին, այլ միշտ ջոկ-ջոկ կը ճաշեն. միայն բուն բարեկենդանի կիւրակի գիշերը ամեն մարդ իւր կնոջ և երեխայոց հետ կը նստի ընթրիքին. եթէ մի տանը 5 և կամ թէ 6 պսակուած եղբայրներ կան, նոցանից ամեն մինը իւր երեխաներով և ամուսինով ջոկ կը նստի սեղան, և դուք կը տեսնէք, որ մի մեծ ծխտած պապական—հին տանը հինգ և կամ թէ վեց տեղ սուփրայ ձգած, ամեն տեսակ ասիական կերակուրներով զարդարուած է սուփրան, կուտեն, կը խմեն, կը զուարճանան և կերգեն ասիական բայաթիներ ու շիքաոտաներ: Երգը վերջանալուց յետ կը խմեն մեռեանց կենացը, բարեմաղթելով արժանանալ զատկական գառը և ուտելու: Այնուհետև կը սկսեն մեռեանց համար բաժին ուղարկել, նախ տան մեծն, ապին, համար, և յետոյ մեծ նանի համար: Ուղարկուած բաժինը լինում է, առհասարակ, հեված հաւ բուդ, մի բաժակ կարմիր գինի, մի քանի խնձոր և կամ թէ տանձ, չամիչ և ուրիշ քաղցրեղէնք: Բաժինը ընդունելուց յետ, պապը և կամ թէ տան մեծը երեսը ուղղում է դէպի այն սուփրան, որտեղից եկած է բաժինը, սկսում է օրհնել, ասելով „շնորհակալ եմ Ձեզանից, տայ Աստուած, որ ամեն տարի արժանանաք բարեկենդանները տեսնելու, որդեկերանցով, ընտանիքով և բարեկամներով արժանաւոր շատ բարեկենդանները ուրախութեամբ վայելելու, ծէք, ծաղկէք, զօրանաք, զօրի պէս թևեր հանէք, Ձեր տաշտ ու մաղը միշտ բարաքեաթի մէջ լինի, Ձեր սուփրան միշտ լիքը լինի, Ձեր սիրտը ուրախ, օջախը վառ և հաստատուն": Օրհնանքից յետ խմում է գինին և առաջարկում է բաժին ուղարկողի կենացը: Այսպէս ամենքը բաժին են տանում և նորա օրհնութիւնը ստանում. ընթրիքից յետ ժողովում են սուփրան և յետոյ տան ամեն մէկին մի մի հատ մեղրամոմ են տալիս, նոքա էլ վառում են այդ մոմերը և կպցնում տան պատերին, որ է վերջին նշանը մեծ-պասին դիմաւորելու:

Վարդան Եղիազարեան.

*) Այդ եկեղեցին զանազան ժամանակներում կողոպտուել է մի քանի անգամ, և միշտ շատ անօթներից, կողոպտել են անօբէնները և այդ նուիրական Ս. խաչերը: Վ. Ե:

ՍԱՄՈՒԷԼ

ՊՈՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Ե.

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԳԻՂԵՐՈՒԱՅ ԱՌԱԻՕՏԸ

Դեռ մուԹն էր, դեռ բաւական ժամանակ կար մինչև առաւօտ։

Մի սպիտակ ձիաւոր, շրջապատած մի խումբ Թիկնապահներով, անդադար արշաւում էր խառվեալ քաղաքի մի փողոցից դէպի միւսը, որտեղ յուզմունքը աւելի սաստկանում էր։ Նա անցնում էր կրակների միջով, նա անցնում էր կործանուող շինուածքների տակով, առանց ամենափոքը երկիւղ կամ վտանգ զգալու։ Նրա ծայրայեղ անձնավստահուԹիւնը այնպիսի տպաւորուԹիւն էր գործում, կարծես, այդ վեհապանծ ձիաւորի մարմինը դիւԹուած կամ կախարդուած լինէր, որ անմխելի էր դարձել ամեն զօրուԹեանց առջև։ Եւ իրաւ, նրա մասին մի այդպիսի կարծիք կազմուել էր ՀասարակուԹեան մէջ[1]*։*

Դա Մերուժան Արծրունին էր։

*Իր փառասիրուԹեան չափ՝ փառահեղ էր ստեղծել նրան բնուԹիւնը, իսկ իր անզուսպ անգԹուԹեան չափով — սոսկալի։ Նրա տոհմային ասորական արիւնը խառնուելով Հայկականի և Ջայ-մար *) ամրոցի վիշապազունների*[2] *արեան Հետ, տուել էին նրա Հզօր կազմուածքին վիշապի ահաւորուԹիւն։ Նոյն ահաւորուԹեան մէջ նա գեղեցիկ էր և վայելչակազմ, որքան գեղեցիկ է լինում Հոգեառ Սադայէլը*[3]*։*

*Իր պղնձեայ ամրակուռ զրահաւորուԹեան մէջ, իր զէնքերի շողշողուն վայլով, Հրդեհների վառ ճառագայԹների առջև, փայլում էր նա, իր անուան Համեմատ, որպէս մի արեգակ լուսապայծառ **, որ աչք էր շլացնում։*

Ամեն տեղ, ուր և յայտնվում էր նա, լռում էր աղմուկը, դադարում էր խառվուԹիւնը։ Բայց Հէնց որ անցնում էր, նրա ետևից լսելի էին լինում անէծքի խուլ մրմունջներ։ Իր սեպհական քաղաքացիքը նզովում էին նրան։ Բայց կար ժամանակ, և այդ ժամանակը շատ Հին չէր, երբ նա անցնում էր այդ քաղաքի փողոցներով, մանկահասակ աղջիկները ծաղիկներ էին սփռում նրա սպիտակ նժոյգի ոտների ներքոյ, իսկ կանայքը օրՀնուԹեան ներբողներ էին երգում. . .

Նա անցաւ մեծ Հրապարակը, որ գտնվում էր իւր պալատնքի առջև։ Գեղեցիկ, սիւնազարդ պալատնքը այրվում էր։ Բայց նա այրվում էր ոչ Թէ Թշնամու կրակներից, այլ քաղաքացիների նետած կրակներից։ «Երբ մեր տները Հրդեհի կերակուր են դառնում, այդ ևս Թող դառնայ», — ասացին նրանք և այրեցին։ Նա նայեց իւր նախահարց շքեղ բնակարանի վրայ, և երեսը սրտմտուԹեամբ շուռ տուեց։

Պալատնքը դատարկ էր, որովհետև նրա ընտանիքը և ազգականները գնացել էին ամարանոց՝ Արծրունեաց բնիկ Ոստանում[4]*։ Այստեղ մնացել էին մի քանի ծառաները և սպասաւորներ միայն։*

Հրապարակի վրայ Հաւաքուած էր մեծ բազմուԹիւն։ Այրուող տներից փախած կանայք, երեխայք, ազատած կարասիների Հետ միասին, խառնափնԹոր կերպով դիզուած էին միմեանց վրայ։ Հրդեհի լուսաւորուԹեան ներքոյ, այդ ազշած, սասանուած Թշուառների կուտակուԹիւնը ներկայացնում էր մի զարհուրելի տեսարան։

Երբ նա մերձեցաւ՝

— Մի՛ մօտենար, Մերուժան, — ձայն տուին կանայքը։

— Հանգցրու՛ կրակը, — աղաղակեցին երեխայքը։

Նա ձեռքը տարաւ դէպի աչքերը։ Ի՞նչ էր, որ սրբեց այնտեղից։ Մի՞Թէ արտասուել կարող էր այդ քարեղէն սիրտը։ Բայց երեխաների ձայնը փշրեց քարը, խորտակեց ապառաժը. . .

Նա դիմեց դէպի քաղաքագռներից մէկը։ Այստեղ ինչ-որ աղմուկ կար մի խումբ քաղաքացիների և դռների վրայ Հսկող պարսիկ պահապանների մէջ։

— Կամենում են բացանել դռները, — զեկուցում տուին նրան։

— Կոտորեցէ՛ք, — Հրամայեց նա։

Սկսեցին կոտորել նրա սեպհական քաղաքացիներին։

Նա անցաւ։

Նրան ուղեկցում էր մի նշանաւոր պարսիկ աստիճանաւոր։ Երբ փոքր ինչ Հեռացան, նկատեց նա.

— Անհնարին կը լինի երկար պաշտպանուել, իշխան։

— Ի՞նչու։

— Որովհետև, այս րոպէիս ականատես եղանք, Թէ որպէս քաղաքացիք կամենում էին դռները բացանել և Թշնամուն ներս Թողնել։

— Դրա Համար էլ ես Հրամայեցի նրանց կոտորել։

— Ո՞ր մէկին կոտորել։

— Բոլորին, եԹէ այնպէս կը վարուէն։

— Այն ժամանակ մեզ անհնար կը լինի կռուել ԹէՀ քաղաքացիների Հետ, և ԹէՀ դրսի Թշնամու Հետ։

— ԵԹէ այդ անհնար կը լինի, մեռնելը, կարծեմ, շատ Հնարաւոր է։

— Այդ սպասում է մեզ. . . Բայց աւելի լաւ չէը լինի, քանի դեռ ևս մուԹն է, օգուտ քաղել գիշերայինից

---

*) *Ջայ-մար նշանակում է օձի տեղ կամ օձի բնակարան, — այսպէս կոչվում էր այն ամրոցը, ուր բնակվում էր վիշապազունների (Աժդահակայ) սերունդի վերջին ժառանգը, մի օրիորդ Անուշ անունով, որ ամուսնացաւ Սահակ Արծրունու Հետ, և այդ ամուսնուԹեամբ վիշապազունների բոլոր ժառանգուԹիւնը անցաւ Արծրունիներին (մանրամասնուԹիւնները չեմոյ)։*

*\) *Մհերուժան, կամ աւելի Ճիշտ՝ Մեհրուժան, դիցաբանական անուն է, որ կազմուած է Մեհր-բովշան բառերից, նշանակում է արեգակ լուսապայծառ։*

խաւարից և, պատառելով պաշարող Թշնամու շղթան, հեռանալ քաղաքից:

— Այդ այնքան հեշտ չէ՝ Ռշտունեաց գազաններուն շղթան պատառել:—Պէտք է պաշտպանել քաղաքը մինչև վերջին շունչը: Երբ փոքր ինչ կը լուսանայ, այն ժամանակ մենք դուրս կը գանք կռուելու:

Պարսիկ աստիճանաւորը լռեց: Նրանք դիմեցին դէպի քաղաքի միւս դռները, որոնք նոյնպէս սաստիկ հրսկողութեան ներքոյ էին դրած:

Գիշերը անցաւ կրակի և բոցերի դժոխային գործողութեան մէջ: Իսկ առաւօտեան լուսաբացին, մոխիր դարձած քաղաքի աւերակների վրայ, սկսուեցաւ սոսկալի կոտորածը: Գիշերը կործանվում էին շինուածքներ, իսկ այժմ կործանվում էին մարդիկ. . .

Դեռ վաղորդեան շամանդաղը նոր էր սկսել պարզուիլ, դեռ նոր թռչունները իրանց ուրախ մնչիւններով սկսել էին աւետել տունջեան լուսատուի ըղձալի ծագումը, երբ քաղաքի դռներից մէկը խորտակուեցաւ: Նա խորտակուեցաւ թէ ներսի բնակիչներից, և թէ դրսի պաշարողներից: Ներս խուժեց կատաղի բազմութիւնը:

«Թող մի կողմ ջոկուիլն քրիստոնեաները». . . որոտացին հազարաւոր ձայներ:

Քաղաքի բնակիչները, մոռանալով իրանց կրած ծանր վնասը, միացան իրանց տները այրող, իրանց դժբախտացնող լեռնականների հետ, և սկսեցին կոտորել պարսից զօրքերին: Այժմ գործում էր նիզակն ու սուրը: Փայլում էր երկաթը և իւր վայլատակման հետ՝ լսելի էր լինում երկաթապատ վահանների սաստիկ տրոփիւնը: Կռիւը կատարվում էր փողոցներում: Պարսիկ զօրքերը՝ օրհասական տագնապի մէջ՝ մարտնչում էին, — մարտնչում էին, որ մեռնելուց առաջ գոնէ մի քանիսին իրանց հետ տանէին: Պերուժան Արծրունին սպառել էր իւր լեզուի բոլոր ճարտարութիւնը նրանց խրախուսելով: Հրամաններ այլևս չէին ազդում: Նա կայծակի նման անցնում էր մէկ փողոցից դէպի միւսը, երբ նկատում էր, որ պարսիկները այն կողմում թուլանում են:

Այդ միջոցին մէկը միջնաբերդի բարձրութիւնից խոժոռ դէմքով նայում էր, թէ ինչ է կատարվում ներքեւում: Որքան նայում էր նա, այնքան նրա դէմքը աւելի տխուր, աւելի յուսահատական արտայայտութիւն էր ստանում: Պերուժանի քաղաքացիները, միանալով Պերուժանի Թշնամիների հետ, կոտորում էին նրա Պարսկաստանից բերած զօրքերին: «Ո՛րքան սխալ հասկացողութիւն ունենք մենք հայ ժողովրդի մասին». . . մտածում էր նա, և նրա զայրացած սիրտը լցվում էր անհնարին դառնութեամբ:

Այդ մարդը վահան Մամիկոնեանն էր, որը, տիկին Համազասպուհիի հետ ունեցած անյաջող բանակցութից յետոյ, դուրս էր եկել, դիտելու քաղաքի խռովութիւնը:

Դեռ արևը չէր ծագել: Բայց վաղորդեան մթին աղջամուղջը սկսել էր նօսրանալ, և շրջակայքը հետզհետէ տեսանելի էին լինում:

Միջնաբերդի բարձրութիւնից նկատեց նա, որ լեռնականներից մի ուռուց խումբ ուղիղ դիմում էր դէպի իւր կողմը: Նրանց առաջնորդում էր մի յաղթանդամ տղամարդ, որ հագիւ երևում էր իւր զրահաւոր և սպարատիակ թիկնապահների միջից: Նա մօտեցաւ և, միջնաբերդի ստորոտից դէպի վեր նայելով, և տեսնելով այնտեղ կանգնած Մամիկոնեան իշխանին, ձայն տուեց.

— Մամիկոնեան տէր, ինչու ես այնտեղ՝ երկչոտ աղուէսի նման կանգնել այդ բարձր քարերի գլխին, ցած իջիր, մենամարտենք և մեր կռիւով վերջ տանք արիւնահեղ կոտորածին: Դու, թէև կորցրիր քո տոհմի առաքինութիւնը, գոնէ մի արատաւորիր նրա քաջութիւնը:

— Ինձ համար չէ՝ ազնուութեան դասը լեռնացիից առնել, Ռշտունեաց տէր, դու, եթէ չէիր ցանկանում հազարաւոր անմեղների արեան հոսումը, դու, եթէ չէիր ցանկանում հազարաւոր տների կրակի ճարակ դառնալը, — դու պէտք է այդ հրաւէրը սկզբից անէիր, երբ դեռ ոչ մի արիւն չէր թափուած: Այն ժամանակ ես պատրաստ կը լինէի դուրս գալ քաղաքից և իմ բազուկների ուժը չափել քոնի հետ: Բայց երբ սկսուեցաւ կռիւը այդպէս տմարդի կերպով,— Թող նոյն կերպով և շարունակուի. . .

—Լեռնացին այդ տմարդութիւնը քեզանից սովորեց, Մամիկոնեան տէր: Նա որ գողի նման մտնում է իւր քրոջ անպաշտպան ամրոցը, և յափշտակում է նրան իւր անմատչելի ննջարանից,—նա իրաւունք չունի խօսք խօսելու մարդավարութեան մասին. . .

Մամիկոնեան իշխանը խօսք չը գտաւ պատասխանելու. իւր փեսայի լուտանքները նետի նման ցցուեցան նրա սրտում: Նա դարձաւ դէպի բերդապահ պարսիկ զօրքը, հրամայեց, որ պաշտպանեն բերդը:

Իսկ Գարեգին Ռշտունին հրամայեց իւր լեռնականներին՝ յարձակում գործել բերդի վրայ:

Հայոց երկիրը, իւր լեռնային և քարքարոտ դիրքի համեմատ, իւր զօրքերի թուում ստեղծել էր առանձին գունդեր, որ կոչվում էին «ք ա ր ա գ ն ա ց ն ե ր»[5]: Իրանք վարժուած էին անհնարին ապառաժների վրայ մագլցել, այդ պատճառով, դրանց գործ էին ածում բերդերի և ամրոցների գրաւման համար, որոնք, Հայաստանում ըստ մեծի մասին, շինուած էին բարձր և անմատչելի ժայռերի գագաթին:

Բայց Ռշտունեաց և Մոկաց լեռնականները, քարերի հետ ապրելով և քարերի հետ մնուելով, երեխայութիւնից իվեր սովորած էին՝ մոզէսի նման վազել ապառաժների վրայ: Պրանք պատրաստի «ք ա ր ա գ ն ա ց ն ե ր» էին: Իսկ այժմ նրանց առջև ներկայանում էր մի հսկայ, ուղղաձիգ քարաբլուր, որի հետ հեշտ չէր գործ ունենալ: Այդ քարաբլուրի գլխին կանգնած էր հզօր միջնաբերդը,

և նոյն բերդի մէջ պահուած էր նրանց սիրելի Տիկինը։

Յարձակումը գործեցին բերդի արևմտեան կողմից, որ նայում էր դէպի ծովը։ Այդ կողմիցն էր միակ մուտքը, որ բարձրանում էր սանդխատաձև աստիճանների վրայով, որ փորուած էին ապառաժի մէջ։ Ուր բնութիւնը թերի էր թողել իւր ամրութիւնը, այնտեղ արհեստը լրացրել էր առանձին պարիսպներով և մարտկոցներով, որոնք կարգ-կարգ բարձրանում էին մինչև քարաբլուրի գագաթը։

Ռշտունեաց «քարագունքերը» սկսեցին վերբարձրնալ։ Նրանք զինուած էին երկաթեայ ճանկերով, որոնցով մագլցում էին միապաղաղ ապառաժների կուրծքի վրայ։ Այդ յանգուգն, աներկիւղ շահատակներին վերևից դանակոծում էին նետերի անթիւ հարուածներով։ Բայց «քարագունքերը» պաշտպանուած էին կաշեայ լայն վահաններով[6], որ մեծ ամպհովանիի ձև ունէին, և կապել էին իրանց ուսերի վրայ։ Նետերը դիպչում էին այդ անմխելի ասպարներին, և անզօր փետուրների նման ցած էին թափվում։

—Քարեր նետեցէ՛ք,—հրամայեց Մամիկոնեան իշխանը։

Սկսուեցաւ սարսափելի քարէկարկուտը։ Հարիւրաւոր ձեռքեր, ծանր քարէ գնդակները պարսատիկների մէջ դրած, պտոյտացնում էին օդի մէջ, և նետում էին դէպի ցած։ «Քարագունքերի» կաշեայ վահանները այժմ անզօր էին այդ վիմային ռմբակոծութեան դէմ պաշտպանելու նրանց։ Քարը դիպչում էր և իւր ծանրութեամբ գլորում էր նրանց դէպի ցած։

Այդ միջոցին միջնաբերդի հիւսիսային կողմում կատարւում էր բոլորովին այլ գործողութիւն։

Աւելի քան երկու հարիւր ձեռքեր առաջ էին մղում մի փայտեղէն այլանդակ հրէշ, որ իւր վիթխարի ծանրութեամբ հազիւ-հազ շարժւում էր թանձր անիւների վրայ։ Նա այն տափակ սայլակների նմանութիւնն ունէր, որ գործ են ածում հայ շինականները։ Զանազանութիւնը նրանումն էր միայն, որ շինականի սայլակը ձգում են առջևից լծած անասուննները, իսկ նրա անիւները տակից շարժում էին մարդիկ, որ թագնուած էին ամրակուռ տախտակամածի ներքոյ և ամենևին չէին երևում։

Բազմաթիւ ձեռքեր բահերով ու բրիչներով հարթում էին նրա ուղին, և հրէշը, որպէս մի մարմնացած ահաւորութիւն, դանդաղ կերպով առաջ էր ընթանում։ Նրա մռայլ, սպառնական երևոյթը սարսափ ձգեց բերդապահների վրայ։ Ամենքը իրանց ուժերը գործ էին դնում նրա կողմը։ Վերևից սկսեցին պարսատիկներով քարէգնդակներ նետել։ Գնդակները դիպչում էին նրա թանձր կազմուածքին, և ոստոստելով մի կողմ էին ընկնում։ Հրէշը ոչինչ չէր զգում, այլ որպէս մի խուլ զարհուրանք, շարունակում էր իւր ուղին։

Դա սոսկալի «փիլիկուանն» էր,—բերդերի և ամրոցների հիմքը փորող հսկայ խլուրդը[7]։

Միջնաբերդը, որ երեք կողմից բարձրաբերձ, ուղղաձիգ և անմատչելի գիրք ունէր, այդ կողմից միայն նրա ապառաժային կողքը փոքր ինչ թեքուած էր, և այդ պատճառով, ամրացրել էին հաստահիմն պարիսպներով ու աշտարակներով։

Հրէշը մօտեցաւ և, իւր ահարկու գլուխը Կպարտուեցամբ վերբարձրացնելով, յենուեցաւ պարսպի վրայ, որպէս փափուկ բարձի վրայ։ Նրա կազմուածքի զաղտնածածուկ խորշերում թագնուած էին բազմաթիւ մարդիկ, որոնք զինուած էին բահերով, բրիչներով և մուրճերով։ Սկսեցին փորել պարսպի հիմքը։ Կրակը միայն կարող էր ազատել բերդը այդ վիթխարի թշնամուց։ Վերևից սկսեցին հրայլին գնդակներ նետել։ Նա ոչինչ չէր զգում։ Նրա տախտակամածը պատած էր թանձր թաղիքներով, որ թրջուած էին ջրով։ Հրայլին գնդակները ընկնում էին նրա վրայ, թրշջշում էին, և իսկոյն հանգչում էին, թողնելով օդի մէջ անախորժ խանձահոտութիւն։

Հրէշի ներքոյ պատսպարուած մարդիկը շարունակում էին եռանդով փորել պարսպի հաստահիմն ստորոտը։ Արդէն բացուել էր մի մեծ ծակ, բայց ծակի առաջը փակում էր պարսպի եռևի ապառաժը։ Երկար բրիչներն ու մուրճերը մաքառում էին այդ ժայռի հետ, բայց արդիւնաւոր հետևանքի չէին հասնում։ Պատածեցին բարձրացնել քանդակի լայնութիւնը դէպի վեր, գուցէ կարելի լինէր ապատուել ապառաժից։

Այդ գործողութեան միջոցին, վերևից նայում էր Մամիկոնեան իշխանը։ Նրա սառն դէմքը արտայայտում էր և՛ տխրութիւն և՛ ծիծաղ։ «Ցիմարնե՛ր,—մտածում էր նա,—ինչ պիտի շահէք, եթէ խորտակելու լինէք այդ պարիսպը»... Եւ, իրաւ, ոչինչ չի պիտի շահէին, որովհետև, տիրելով այդ պարսպին, նրանց առջև դուրս կը գար երկրորդը, երրորդը... որոնք կարգ-կարգ և աստիճան առ աստիճան բարձրանում էին միմեանց ետևից, որքան բարձրանում էր քարաբլուրը, որի գագաթին կանգնած էր հզօր միջնաբերդը։

Բայց իշխանին տանջում էր այն միտքը, թէ լեռնականները այդ պատրաստութիւնները չէին կարող ունենալ. անտարակոյս, նրանք վեր էին առել քաղաքից. ուրեմն, նրանք կատարելապէս տիրապետել էին քաղաքին։ Ի՞նչ եղաւ Վերուժանը, ինչ եղան պարսիկ զօրքերը, որ պահպանում էին քաղաքը։—Այդ հարցը սաստիկ վրդովեցնում էր նրան։ Վերուժանին կորցնելով, նա խոպառ կորած և սպանուած էր համարում այն գաղափարը, որը իւր համար այնքան մեծ նշանակութիւն ունէր, և որի իրագործման համա՛ր նա զոհել էր ամեն ինչ...

Ոչ սակաւ խռովութեան մէջ էր գտնվում և պարսիկ բերդապահ զօրքը։ Նրանք պարզ տեսնում էին, որ քաղաքը գրաւած էր, իսկ իրանք մնացել էին քարի գլխին, պաշարուած անթիւ թշնամիներով։ Նրանց գլխաւորը մօտեցաւ իշխանին և շնչաստպառ ձայնով ասաց.

—Տաղանապը մեծ է, տէր իմ։

—Տեսնում եմ:

—Պէտք է անձնատուր լինել, տէր իմ:

—Երբէ՞ք:

—Մի քանի րոպէից յետոյ ներս կը խուժէ վայրենի բազմութիւնը:

—Ննկարելի է: Դու, ուրեմն, այդ բերդը չես ճանաչում:

—Եթէ բերդի ամրութիւնը կարողանայ պաշտպանել մեզ դրսի թշնամուց, յետոյ ինչով կարող ենք պաշտպանուել մենք ներսի թշնամու դէմ—քաղցի և ծարաւի: Նրանք, պաշարման մէջ պահելով մեզ, բոլորիս սովամահ կանեն:

—Աւելի լաւ:—Կը մեռնէք և կազատուէք. . .

—Ինչու ի զուր տեղը մեռնել:

—Որ չարատաւորվի Արքայից Արքայի դրօշի փառքը: Որ չասեն, թէ պարսիկ զինուորը երկչոտ է:

Սպան լռեց, և գլուխ տալով հեռացաւ:

«Անպիտաննե՛ր,—ասաց նրա ետևից գայրացած իշխանը,—դուք քաջ էք այն ժամանակ միայն, երբ թշնամին ձեր առջևից փախչում է». . .

Մի և նոյնը պատահեց ներքևում, քաղաքի մէջ: Երբ լեռնականները, խորտակելով քաղաքի դռները, ներս մտան, այդ ժամանակ պարսիկները բոլորովին վհատութեան մէջ ընկան: Մերուժանի բոլոր ջանքերը քաջալերելու նրանց—մնացին ապարդիւն: Մի թեթև ընդդիմադրութիւնից յետոյ, պարսիկների մի մասը անձնատուր եղաւ, իսկ մնացածները, քաղաքի մէջ դռներից դուրս գալով, փախան:

Մերուժանը մնաց միայնակ, լքուած իւր քաղաքացիներից, և լքուած պարսիկներից, որոնց վրայ մեծ յոյսեր ունէր: Նա վերջին անգամ իւր վշտալի հայեացքը դարձրեց դէպի մոխիր դարձած քաղաքը, ուր ապրել էին, ուր իշխել էին նրա նախնիքը, և, օդուտ քաղելով ընդհանուր խառնուածքից, իւր թիկնապահների փոքրիկ խումբով, դուրս եկաւ քաղաքից, և անյայտացաւ վաղարդեան մթութեան մէջ. . .

Իսկ այժմ վաղարդեան մթութիւնը բոլորովին չքացել էր, տեղի տալով նախաարփեան ախորժելի լուսաւորութեան: Արշալոյսը սկսել էր շառագունել, ներկելով հորիզոնը ոսկեբանգ ծիրանիներով: Շատ չանցաւ, արևի առաջին արիւնագոյն ճառագայթները հանդիպեցան մի արիւնոտ գործի. . .

Առաջին պարսպի քանդակը այն աստիճան լայնացել էր, որ լեռնականները ներս էին մտել և այժմ սկսել էին փորել երկրորդ պարսպի ստորոտը: Հրէշը մնացել էր դրսում, նա իւր վերթխոլի մարմնով այդ բացուած քանդակից անցնել չէր կարող: Միջնաբերդից համարեա ընդդիմադրութիւն չէին գործում: Պարսիկները այժմ իրանց վերկութիւնը միայն անձնատուր լինելու մէջ էին գտնում, թէև պաշտպանուելու ամեն միջոցներ ունէին: Մամիկոնեան իշխանը, վաղուց հասկացած լինելով այն ճշմարտութիւնը, թէ վտանգի ժամանակ պարսիկ զինուորի վրայ յոյս չէ կարելի դնել,—նրանց թողել էր իրանց կամքին:

Միւս կողմից, «քաջանացները» մեծ յառաջադիմութիւն էին գործել: Նրանցից մէկը արդէն մաղըլցելով հասել էր մինչև բերդի մուտքը, և իւր դաշոյնի ծայրը ցցել էր երկաթապատ դռան վրայ:

—Բացարէք,—աղաղակում էր նա,—եթէ չէք ցանկանում, որ իմ հազարաւոր ընկերների դաշոյնները այսպէս ցցուին ձեր սրտում:

Դռները բացուեցան: Վերևում բարձրացրին անձնատուր լինելու նշանը: Իսկ ներքևում տիրեց ընդհանուր ցնծութիւն բոլոր լեռնականների մէջ:

Այժմ Ռշտունեաց նահապետը, շրջապատուած իւր աւազներով, հանդիսաւոր կերպով մօտեցաւ բերդի ստորոտին: Նոյն միջոցին վերևից ցած իջաւ բերդապահների պարսիկ գլխաւորը և, առաջարկելով նրան բերդի բանալիները, ասաց.

—Յաղթուած Մերուժանի բերդը յանձնում եմ յաղթողների ամենահիառաւորեալին: Ընդունի՛ր այդ բանալիները, Ռշտունեաց տէր: Այժմ թէ նուաստիս, թէ իմ հրամանի ներքոյ գտնուած բերդապահները կը վայելէք իմ կատարեալ մեծահոգութիւնը, եթէ ցոյց կը տաք, թէ արտեղ է պահուած Ռշտունեաց Տիկինը:

—Իսկոյն ցո՛յց կը տան. . . միջնաբերդի բարձրութիւնից լսելի եղաւ մի ձայն, որ իսկացաւ ընդհանուր աղաղակների մէջ:

Դա Վահան Մամիկոնեանի ձայնն էր: Գեռ միայնակ կանգնած էր նա վերևում, և լի դառնութեամբ դիտում էր, թէ ինչ է կատարվում ներքևում: Երբ նկատեց բանալիների յանձնուիլը, այնուհետև ամեն յոյս կորած համարելով, նա դարձաւ դէպի իւր մարդիկը և մի ինչ-որ խորհրդաւոր նշան տուեց, և ինքը հեռացաւ. . .

Այդ միջոցին Միջնաբերդի արևմտեան կողմի աշտարակներից մէկի բարձրութիւնից քարշ ընկաւ մի սպիտակ մարմին, որ ձիւնի պէս փայլում էր արևի առաջին ճառագայթների առջև: Ամենքը նայեցին նրա վրայ և սարսափեցան. . .

Չը սարսափեցաւ միայն Մամիկոնեան իշխանը: Հայց նա վշտացաւ. . . Իւր տխուր հայեացքը դարձրեց դէպի սպիտակ մարմինը, սրտի բոլոր բաբախմունքով նայեց

նրա վրայ, յետոյ սրբեց աչքերի արտասուքը, և իւր դողդոջուն քայլերը ուղղեց դէպի միջնաբերդի հիւսիսային կողմը։ Ամբողջ տիեզերքը խաւարած էր նրա համար։ Նա գնում էր, բայց չը գիտէր, թէ ո՛ւր է գնում։ Համարեա ընազդմամբ մօտեցաւ նա այն քարակոփ անճաւներից մէկին, որի մուտքը փակուած էր երկաթեայ դռնով։ Գրպանից հանեց մի փոքրիկ բանալի և բացարեց դուռը։ Ներս մտաւ և դուռը իւր ետևից կրկին կողպեց։ Անճաւի մի խորշում, քարեայ յատակի մէջ, ագուցած էր մի քառանկիւնի սալ, որ իւր գոյնով ամենևին չէր որոշվում յատակից։ Նա ոտքը դրեց սալի մի անկիւնի վրայ, և նրա ճնշումից խուփր ինքնիրան բարձրացաւ։ Տակից յայտնուեցաւ մի վիրապի նեղ բերանը, որից մի մարդ հազիւ կարող էր անցնել։ Նա երկու ձեռքերը դրեց նրա բերանի երկու շրթունքների վրայ, և անյայտացաւ վիրապի մէջ։ Բերանը դարձեալ փակուեցաւ։

Դա մի ստորերկրեայ դաղտնի անցք էր, որ ծառայում էր որպէս փախուստի ճանապարհ։

Համարեա մի և նոյն ժամանակ, երբ Հայրը մտաւ դաղտնի վիրապի մէջ, Վանայ մեծ քաղաքադռներին հասաւ որդին—Սամուէլը։

Առաջինը, որ գրաւեց երիտասարդի ուշադրութիւնը, երկու թևաւոր վիշապներն էին, որ հսկում էին այդ դռան աջ և ձախ կողմերում։ Արհեստի այդ սքանչելի արդիւնքները այժմ փշրուած, խորտակուած էին։ Նա ներս մտաւ։ Մոխիր դարձած քաղաքը տակաւին մխում էր դեռ չը հանգած կրակների մէջ։

Նրա աչքին ընկաւ աշտարակի բարձրութիւնից կախ ընկած սպիտակ մարմինը, որ դեռ ձիւնի նման փայլում էր արևի առաջին ճառագայթներից [8]։

—Այդ ինչ է,—հարցրեց նա սոսկալով։

—Ուշտունեաց Տիկնոջ մարմինն է,—պատասխանեցին նրան։

—Ո՞վ կախաղան հանեց։

—Վահան Մամիկոնեանը։

—Կայ՛ն, . . . բացականչեց խեղճ երիտասարդը, աչքերը բռնելով։—Նա սպանեց եղբօրը, իսկ դու—քո քրոջը...

Ր Ա Ֆ Ֆ Ի

(Կը շարունակուի)։

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐՇԱՒԻՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խնդրվում է այն յարգելի անձինքներից, որոնց մօտը գտնվում է

ՎԱՌՎԱՌԻՅԷԻ

Բաժանորդագիրքերը, մինչև Ապրելի 10-ին բարեհաճեն ուղարկել Ղարս՝

Պօղոս Դօմինիկեանցին։

Խորհն Ծայրագոյն վարդապետ Սահմանէի Հրատարակած «ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ» ամսագիրը պիտի հրատարակվի Պետերբուրգում կանոնաւոր կերպով ճանչավաքժանչան և ընդհանուր գրչանոչան ուղղութեամբ, ներկայ 1887 թուի Սեպտեմբեր ամսից քանի մի հայազն երիտասարդների դործակցութեամբ և աշխատակցութեամբ։ Տարեկան գինն է 5 մանէթ։

Հասցէն. Редакція „Манкаваржаноцъ“, Петербургъ, Невскій проспектъ, д. Армянской церкви.

ԱՌԱԿԱԳԻՐՔ

Ինքնագիր և թարգմանածոյ առակներ և երգեր ժողովրդական լեզուով գրուած.

ԺՈՂՈՎԵՑ Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑ

Գինն է 50 կ.

Վաճառվում է „Կենտրոնական Գրավաճառանոցում“։ Օտարաքաղաքացիք ճանապարհածախքի համար ուղարկում են 15 կ.

5—4

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

SAINT-MARTIN. Mémoires sur l'Arménie 2 հատոր, կազմուած։ Առաջին հատորում պակասում են Ընծայականից և Ազգաբարութիւնից մի մի թուղթ, ընդամէնը 4 երես, որ կարելի է, ըստ կամաց, արտագրել ուրիշ օրինակից և ամբողջացնել։ Գինն է 60 րուբլի։

LEBEAU, Histoire de Bas-Empire, Սէն Մարտէնի և Բրօսսէի ծանօթութիւններով. 21 հատոր, կազմուած։ Գին է 50 րուբլի։

Դիմել С. Петербургъ, Большая Итальянская, д. 15, кв. 34. Ստ. Մալխասեանցին։

Լոյս տեսաւ ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Առաքել Բահադրեանի

ԱՒԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

և վաճառվում է բացառապէս Կենդրոնական Գրավաճառնոցում։ Գինն է 25 կոպ. գումարով գնողներին 20% զիջումն։

Նոյն տեղում վաճառվում է Ա. Բահադրեանի ՈՒՂԵՑՈՑ ՀԱՑ ՈՒՍՈՒՑՉԻՆ։ Գինն է 1 ր.։

3—3

Լոյս տեսաւ Ս. Պետերբուրգում եւրոպական նօտաներով «Քնարիկ Մանկական» երգարանը, աշխատասիրութիւն ՂԱԶԱՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ, որ պարունակում է իւր մէջ հատընտիր մանկական երգեր, պարերգեր և աղօթքներ, որոնք յարմարեցրած են դաշնամուրի վերայ նուագելու։ Իւրաքանչիւր օրինակի գինն է ճանապարհածախքով 2 րուբլի։ Վաճառվում է Թիֆլիզում պ. Յ. Սուքիասեանի երաժշտական գրախանութում և միւս գրավաճառանոցներում, նոյնպէս և աշխատասիրողի մօտ, որի հասցէն հետևեալն է. Թիֆլիս—Հաւլաբար, Ղազարոս քահանայ Յովսէփեան։

ՀԱՇՎՈՒԵԿՈՒԹԻՒՆ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻ
31-Ն ՄԱՐՏԻ 1887

ՊԱՀԱՆՋԸ	Թիֆլիսում	Բագուայ բաժն.	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն Թղթադրամ).	84 413—36	26,594—25	111,007—61
2. Ընթացիկ հաշիւ Պետական բանկային բաժնում	692,657—56	352,451—39	1,045,108—95
3. Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ	1,552,055—83	455,390—17	2,007,446—
4. Զեղջումն տոկոսաբեր Թղթերի, կտրոնների և այլն	48,950—99	365—59	49,316—58
5. ՓոխառուԹիւն գրաւականով՝			
ա) Պետական ապահովեալ տոկոսաբեր Թղթերի	942,499—26	81,323 —	1,023,822—26
բ) » ոչ ապահ. » »	241,149 —	4,675 —	245,824 —
գ) Ապրանքների	4,620 —	75,704 —	80,324 —
դ) ոսկւոյ և արծաթի	— —	31 720 —	31,720 —
6. Բանկային պատկանեալ տոկոսաբեր Թղթեր	207,560—73	13,130—89	220,691—62
7. Ոսկի և արտասահմանի վճարանակագրեր	2,908—38	2,666—74	5,575—12
8. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւ (Loro)	665,230—80	— —	665,230—80
բ) Բանկային հաշիւ (Nostro)	728,212—45	— —	728,212—45
9. Բաժնի հաշիւը կենտրոնական վարչուԹեան հետ	1,208,389—31	— —	1,208,389—31
կենտրոնական վարչուԹեան հաշիւը բաժնի հետ	— —	676,159—46	676,159—46
10. Բողոքուած մուրհակներ	374,823 —*)	— —	374,823 —
11. Պայմանաժամը անցուցած վճարատուԹիւններ	9,880 —	— —	9,880 —
12. Ընթացիկ ծախսեր	8,632—16	2,775—07	11,407—23
13. Կահկարասիք և սկզբնական ծախսեր	3,701—68	3,572—76	7,274—44
14. Ցեխ ստացուելիք ծախսեր	8,145—47	285—65	8,431—12
Ր. Ա.	6,783,829—98	1,726,813—97	8,510,643—95

*) Բողոքուած մուրհակներից վճարներ, որոնք կարող են տեղի ունենալ, ծածկելու համար յատկացրած է
առանձին գումար. . . . . 129,491 ր. 17 կ.

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բագուայ բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ	145,031—46	— —	145,031—46
3. Արդիւնք 1885 Թ. և պահեստ.	129,491—17	— —	129,491—17
4. Իրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով	1,651,517 —	41,690 —	1,693,207 —
բ) ց'պահանջ	370,209 —	22,100 —	392,309 —
գ) Ընթացիկ հաշուով հաստատ.	1,103,736—54	263,207—48	1,366,944—02
» » պայմանաւոր	— —	151,029—64	151,029—64
5. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	499,970—04	— —	499,970—04
բ) Բանկային հաշիւը (Nostro)	966,263—89	— —	966,263—89
6. Բաժնի հաշիւը կենտրոնական վարչուԹեան հետ	— —	1,219,860—85	1,219,860—85
կենտրոնական վարչուԹեան հաշիւը բաժնի հետ	716,301—57	— —	716,301—57
7. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրոնների բաշխը 1882, 1883 և 1884 Թ.	575—60	— —	575—60
8. Ձնվճարուած տոկոսներ աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողուԹեանց	53,588—47	2,931—29	56,519—76
9. Սպասուած տոկոսներ և յանձնարարականներ.	48,492—41	18,923—73	67,416—14
10. Փոխանցիկ գումարներ	32,221—44	2,865—32	35,086—76
11. Արդիւնք 1886 Թ.	66,431—39	4,205—66	70,637—05
Ր. Ա.	6,783,829—98	1,726,813—97	8,510,643—95

Дозв. Ценз. Тифлисъ, 3 Апрѣля 1887 г. Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.